

հրատարակվել են Դավրիժեցու պատմագրքի աշխարհաբար թարգմանությունը (1988 թ., թարգմանիչ Վարագ Առաքելյան) և գիտաքննական բնագիրը (1990 թ., աշխատասիրությամբ Լենա Խանլարյանի), որոնք ուսումնասիրության առումով անգնահատելի հիմք են և մեծապես կարող էին նպաստել ու նպաստում են Դավրիժեցու հանդեպ գիտական հետաքրքրության մեծացմանը:

Գիտաքննական բնագրի՝ Լենա Խանլարյանի հեղինակած «Առաջաբանը» հմտալից ուսումնասիրություն է, սակայն ենթարկված է առաջաբանային հղացքի բոլոր օրինաչափություններին, այսինքն՝ ներառում է Դավրիժեցու պատմագրքի վերաբերյալ հնարավոր բոլոր կարգի տեղեկություններ ու վերլուծումներ, հետևաբար՝ առկա խնդիրների քննությունը առավել հաճախ մնում է մակերեսային կամ ոչ բավարար խորության մակարդակին:

Ընդհանրապես՝ Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» աշխատությունը քննաբանվել ու կիրառվել է ոչ միայն պատմագիտական աշխատություններում, գրականության պատմություններում ու տարբեր անդրադարձներում, այլև կերպարվեստի, փիլիսոփայության, գեղագիտության հարթություններում: Լ. Սահակյանն, օրինակ, գրում է, որ «Պատմական իրավիճակի քննարկումը, որն իրականացվում է... [Առաքել Դավրիժեցու] ...կողմից, տալիս է նրան բոլոր հիմքերը գնահատելու նաև որպես խորաթափանց պատմիչ-փիլիսոփա: Բանն այն է, որ հայ պատմագիրը պատմական փաստերը վերլուծելիս, ըստ էության, կատարել է փիլիսոփայական հարցադրումներ և ըստ այդմ արտահայտել մտքեր, որոնք, մեր

---

արժեքավոր ուսումնասիրությունն ցերկայացվում է Առաքել Առաքելյանի «Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն» աշխատությամբ՝ 1964-ին լույս տեսած երկրորդ հատորի 519-559 էջերը, որոնք պատմողական-նկարագրական բնույթ ունեն սոսկ: